‹‹ԱՐՄՍԵՐՏ›› ՍՊԸ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄՆՈՒՄ ԳԱՆԳԱՏՆԵՐԻ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Արտադրանքի սերտիֆիկացման մարմնում (այսուհետ՝ ՍՄ) հաստատված է AC 7.13 PR04-2024 ‹‹Բողոքարկումների և գանգատների կառավարում›› ընթացակարգը, որով սահմանվում է արտադրանքի համապատասխանության գնահատման գործընթացում սերտիֆիկացման մարմնի և հայտատուի միջև առաջացած տարաձայնությունների քննարկման կարգը:

Գանգատը կարող է ՍՄ ներկայացվել գրավոր՝ փոստով, էլեկտրոնային փոստով կամ առձեռն: Գանգատին կարող են կցվել գանգատը հիմնավորող փաստաթղթերը կամ դրանց պատճենները:

Գանգատը ստանալուց հետո ՍՄ-ն հաստատում է, թե արդյոք գանգատը առնչվում է համապատասխանության գնահատման գործընթացին, որի համար ինքը պատասխանատու է, և եթե այո, ապա այն հաշվի է առնում:

ՍՄ-ի ղեկավարն իրավունք ունի մերժել այն գանգատը, որն ըստ էության չի համապատասխանում իրականությանը: Մերժումը կատարվում է գրավոր՝ մերժման պատճառի հիմնավորմամբ:

Գանգատի քննարկումն իրականացվում է ՍՄ-ի փորձագետների կողմից՝ ըստ գանգատի առարկայի:

ՍՄ-ի ղեկավարը բանավոր հանձնարարությամբ նշանակում է պատասխանատու անձի՝ անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման, գանգատի իսկությունը ստուգելու, այն գնահատելու և հետագա գործողությունների համար առաջարկներ մշակելու համար:

Գանգատի քննարկմանը չեն մասնակցում գանգատի առարկայի հետ առնչվող անձինք:

Այն փորձագետները, ովքեր տրամադրել են հայտատուին խորհրդատվական ծառայություններ կամ աշխատել են նրա մոտ, չեն կարող մասնակցել տվյալ հայտատուի կողմից ներկայացված գանգատի քննարկման գործընթացին՝ խորհրդատվության տրամադրման կամ նրա մոտ աշխատանքի ավարտից հետո երկու տարվա ընթացքում:

ՍՄ-ն պատասխանատու է անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը (որքանով հնարավոր է) հավաքելու և համադրելու համար՝ գանգատի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով:

Գանգատի վերաբերյալ վերջնական որոշումը պետք է կայացվի ՍՄ-ի կողմից այն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Գանգատի քննարկման արդյունքը խնդրի լուծումն է կամ պատճառաբանված մերժումը:

Եթե հայտատուն համաձայն չէ արտադրանքի համապատասխանության գնահատման գործընթացում ընդունված որոշումներին, ապա նա կարող է գրավոր բողոք ներկայացնել Ընկերության բողոքարկման հանձնաժողովին՝ բողոքին կից ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթերը:

Բողոքը քննարկվում է արտադրանքի սերտիֆիկացման մարմնի բողոքարկման հանձնաժողովի կողմից՝ բողոքը ստանալուց ոչ ուշ քան 15 աշխատանքային օրվա ընթացքում:

Հայտատուն իրավունք ունի մասնակցել հանձնաժողովի նիստին և հայտնել իր կարծիքը:

Շահագրգիռ կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի քննարկվող հարցի շուրջ հրավիրել իրավասու փորձագետի՝ բողոքարկման հանձնաժողովին պարզաբանումներ տալու համար:

Բողոքի քննարկման ժամանակ առաջացած ծախսերը (համապատասխան մասնագետներ հրավիրելու) վճարում է հայտատուն:

Եթե հայտատուն համաձայն չէ բողոքարկման հանձնաժողովի որոշման հետ, նա իրավունք ունի դիմել համապատասխանության գնահատման ազգային մարմնին կամ դատարան:

«ԱՐՄՍԵՐՏ» ՍՊԸ տնօրեն Ա. Աբրահամյան

Արտադրանքի սերտիֆիկացման ղեկավար Բ. Մալյան

23.10.2025թ.